

## ՄՊԱՍՈՒՄ

Ժամը տասից մի քանի րոպե պակաս հնչեց հեռախոսագանգը: Մերին շտապեց վերցնել լսափողը.

— Այո՛:

Խոսողը գավառեցու տպավորություն էր թողնում, նրա ձայնը լարված էր ու նվաղուն: Նա ինչոր բան էր հարցնում, բայց Մերին չէր կարողանում պարզ լսել նրան:

— Այո, — ասաց Մերին նորից: — Բարի եղեք մի քիչ ավելի բարձր խոսել, — ինդրեց նա: — Չեմ լսում. . . Ասում եմ, որ չեմ լսում ձեզ: Խնդրում եմ, մի քիչ ավելի բարձր խոսեք. . . Շնորհակալություն:

Հիմա, լարված ու անհամբեր, Մերին կարողանում էր լսել նրան, թեև թվում էր, թե խոսողի ձայնը շարունակում էր բավականին հեռվից գալ:

— Միսիս Ջեյ Ֆոլե՞տն է խոսում:

— Այո, լսում եմ: Ի՞նչ է պատահել (մի պահ չէր լսվում անձանոթի ձայնը): Այո, միսիս Ջեյ Ֆոլետն է:

Որոշ դադարից հետո, նորից լսվեց խոսողի ձայնը.

— Տեղի է ունեցել. . . դժբախտ դեպք է պատահել ձեր ամուսնուն: Գլուխն է վնասվել, անցավ Մերիի գլխով:

— Լսում եմ, — ասաց միսիս Ֆոլետը կերկերուն ձայնով:

Հենց նույն պահին անձանոթն ասաց.

— Լուրջ պատահար է:

— Լսեցի, — ասաց Մերին ավելի հստակ ձայնով:

— Ես ուզում եմ իմանալ, թե նա ունի՞ արդյոք մի մոտ ազգական, որ կարողանա այստեղ գալ: Մենք շնորհակալ կլինենք ձեզանից, եթե մեկին անմիջապես այստեղ ուղարկեք:

— Այո, այո, եղբայրս կգա: Որտե՞ղ է գալու նա:

— Փովել կայարանում եմ, Բրանիք երկաթեղենի խանութի մոտ, շուրջ տասներկու մղոն է: Բոլ Քամփ Փայքից:

— Բրանիք երկաթեղենի՞ . . .

— Բրանիք: Հենց Փայքի ձախ մասում է, մի փոքր այս կողմի վրա, Բել Բրիջի մոտ, Նոքսվելի կողմը:

Լսափողում փսփսոց էր լսվում:

— Ասացեք ձեր եղբորը, որ տեղը չմոռանա: Մենք լույսը չենք հանգցնի, իսկ դրսում լապտեր կվառենք:

— Բժիշկ կանչե՞լ եք:

— Ինչի՞ մասին է խոսքը, մադամ:

— Բժշկի, բժիշկ կանչե՞լ եք: Բժիշկ ուղարկե՞մ:

— Ամեն ինչ կազրին է, մադամ: Միայն մի մարդ է պետք, որ ազգական լինի նրան:

— Եղբայրս կգա, որքան հնարավոր է շուտ: «Վալտերը մեքենա ունի», մտածեց Մերին: — Անչափ շնորհակալ եմ, որ զանգահարեցիք:

— Չարժե, մադամ: Հուսով եմ, որ կներեք վատ լուր հաղորդելու համար:

— Բարի գիշեր:

— Ցտեսություն, մադամ:

Մերին հազիվ էր ոտքերի վրա կանգնում, գրեթե կախ էր ընկել հեռախոսից: Նա ձգեց իր ոտքերը, հենվեց պատին ու զանգահարեց.

— Անդրյո՞ւ:

— Մերի՞, — պատասխանեց եղբայրը:

Մերին խորը շունչ քաշեց:

— Մերի՛:

Նա նորից խորը շունչ քաշեց, թվում էր, թե օդը չի բավականեցնում:

— Մերի՛:

Գունաթափ ու շփոթահար, փորձելով իրեն ենթարկել դողացող ձայնը, Մերին ասաց.

— Անդրյու, տեղի է ունեցել. . . Մի մարդ հենց նոր զանգահարեց Փովել Կայարասանից, այնտեղից տասներկու մղոն է մինչև La Follette: Նա ասաց. . . նա ասում է, որ Ջեյին լուրջ բան է պատահել: Նա ուզում է. . .

— Օ, տեր իմ աստված, Մերի՛:

— Նա ասում էր՝ ցանկալի է, որ Ջեյի ընտանիքի անդամներից որևէ մեկը հնարավորին չափ շուտ դեպքի վայրը գնա, որպեսզի օգնի իրենց Ջեյին տուն բերելու:

— Ես կկանչեմ Վալտեր Ստարին, նա ինձ այնտեղ կտանի:

— Լավ: Դու կգնա՞ս այնտեղ, Անդրյու:

— Իհարկե, մի րուպե:

— Ի՞նչ:

— Հորաքույր Հաննան է:

— Ես կարո՞ղ եմ խոսել նրա հետ, երբ վերջացնես:

— Իհարկե: Նրա որտե՞ղն է վնասվել, Մերի:

— Անձանոթը ոչինչ չասաց:

— Իսկ դու չհարցրեցի՞ր. . . Դե լավ, ոչինչ:

— Ոչ, — ասաց Մերին: Հիմա նա զարմանքով հասկացավ, որ ոչինչ չի հարցրել:  
— Ես համոզված էի, որ նրա գլուխն է վնասվել: Իհարկե գլուխն է:

— Նրանք. . . տանե՞մ դոկտոր Դեկոլբին:

— Նա ասաց, որ բժշկի կարիք չկա, միայն քո կարիքն ունեն:

— Հավանաբար արդեն բժիշկ են կանչել:

— Ես էլ եմ այդպես կարծում:

— Կկանչեմ Վալտ. . . սպասիր, ահա հորաքույր Հաննան:

— Մերի:

— Հորաքույր Հաննա, Ջեյին դժբախտություն է պատահել: Անդրյուն պետք է անմիջապես այնտեղ գնա: Կգա՞ք ինձ օգնելու, որպեսզի ամեն ինչ կարգի բերենք: Գուցե նրան հիվանդանոց չտանեն, այլ տուն բերեն:

— Իհարկե, Մերի: Իհարկե կգամ:

— Հայրիկին ու մայրիկին ասա, որ չանհանգստանան ու դուրս չգան տնից, չմոռանաս նաև բարևել նրանց: Մենք պետք է մեզ հանգիստ պահենք, մինչև որ ամեն ինչ իմանանք կատարվածի մասին:

— Իհարկե: Հիմա կգամ:

— Շնորհակալություն, հորաքույր:

Մերին խոհանոց մտավ ու կրակ վառեց, վրան դրեց ջրով լի մի մեծ աման, մի փոքրն էլ՝ թեյի համար: Հնչեց հեռախոսի զանգը:

— Մերի, որտե՞ղ եմ գնալու:

— Չգիտե՞ս ինչ է, Փովել կայարան, դեպի Փայքի կողմը . . .

— Գիտեմ, բայց ճիշտ տեղն ասա: Նա չի՞ ասել քեզ:

— Ասաց՝ Բրանիք երկաթեղենի խանութի մոտ: Բրանի՞ք: Լսո՞ւմ ես:

— Այո, Բրանիք:

— Անձանոթն ասաց, որ լույսը չեն հանգցնի, որպեսզի դու տեղը չկորցնես: Այն գտնվում է Փայքի հենց ձախ կողմում, Բել Բրիջի մոտ, մի փոքր այս կողմի վրա:

— Լավ, Մերի: Վալտերը այս կողմով է գալու, հորաքույր Հաննային հետներս կբերենք:

— Շատ բարի, Անդրյու, շնորհակալություն:

Մերին բորբոքված ու հուզված, շտապ իջավ ննջասենյակ: «Ինչ իմանամ, — մտածեց նա, — անձանոթը ոչ մի կարգին բան չասաց, ես էլ չհարցրեցի: Իմիջիայլոց, անձանոթի խոսելու ձևից կարելի է . . .»: Նա թափ տվեց վերմակը, ծալեց ծածկոցը և ուղղեց բարձր: «Պարզապես, չպետք է մտածեմ կատարվածի մասի այնքան ժամանակ, մինչև որ ավելին չիմանամ», — որոշեց Մերին: Նա արագ քայլերով մոտեցավ սպիտակեղենի պահարանին և այնտեղից մաքուր սավաններ ու բարձի

երեսներ վերցրեց: «Անծանոթը նույնիսկ չասաց՝ բժիշկ կանչե՞լ են, թե ոչ»: Մերին մի սավան փռեց անկողնու վրա, ձեռքով հարթեց այն ու չորս ծայրերը մտցրեց ներքնակի տակ: Հետո ձեռքերը տարածեց անկողնու երկայնքով մեկ ու ու ավերի մեջ զգաց հաճելի մի սառնություն, որը նրան մեծ հույսեր ներշնչեց ապագայի նկատմամբ: «Օ՛, տեր աստված, բավականաչափ ուժ տուր նրան տուն վերադառնալու, որպեսզի կարողանամ խնամել նրան, լավ խնամել»: «Ամեն ինչ կարգին է, մադամ»: Այդ ինչոր բան է նշանակում: Այդ նշանակում է, որ նրանք բժիշկ են կանչել, անծանոթը դա արել է պարզապես ապահովության համար, թեև Ջեյի վիճակը այնքան էլ սարսափելի չէ, ինչպես հավատացնում էր անծանոթը կամ հնարավոր է. . . Այս եղանակին թեթև վերմակն էլ բավական է, հակառակ դեպքում, եթե ցրտի՝ երկուսը: Մերին շտապ մոտեցավ պահարանին ու այնտեղից երկու վերմակ վերցրեց, նույնիսկ չգիտակցելով, որ կարող է աղմուկ բարձրանալ, թեև սովորաբար անաղմուկ էր քայլում: «Միայն մի մարդ, որ ազգական լինի նրան»: Այդ նշանակում է, որ Ջեյի վիճակը վատ է, այլապես անծանոթը իրեն կկանչեր: Ոչ, ինքը պարտավոր է մնալ տանը, երեխաների մոտ: Երևի անծանոթը գիտեր, որ տանը երեխաներ կան: Այնուամենայնիվ, ինքը պետք է տանը մնա, որպեսզի ամեն ինչ կարգի բերի, նա այդ լավ էր հասկանում: «Նա նույնիսկ ոչինչ չասաց, որ պատրաստեմ: Նա վստահ էր, որ իմ անելիքը գիտեմ: Տղամարդ է, մտքովն էլ չի անցնում այդ»:

Մերին ատամներով բռնեց բարձի մի ծայրից, վրան հազցրեց բարձի երեսն ու փոմփոռացնելով իր տեղը դրեց: Հետո մեկ ուրիշը վերցրեց ատամներով և այնպես սեղմեց, որ նրանց արմատները ցավեցին: Այդ մեկին էլ բարձի երես հազցրեց ու հարդարեց: Այնուհետև, առաջին բարձր դրեց անկողնու մի ծայրին, երկրորդը՝ նրա դիմաց, երկուսն էլ փոմփոռացրեց, հարթեց և մի կողմ քաշվելով՝ թեքեց գլուխն ու նայեց դրանց: Մի բոպե Մերիին թվաց, թե տեսնում է Ջեյին, որը սովորաբար մատուցարանը ծնկներին նստում էր անկողնու եզրին, երբ ուզում էր ուղղել մեջքը, և ժպիտը դեմքին նայում էր իրեն, աշխատելով ձայնին խոպոտ երանգ տալ, պարզապես կատակ անելու համար: Եթե նրա գլուխն է, մտածեց Մերին, ապա պետք է պառկի մեջքի վրա, հարթ տեղում:

— Ի՞նչ իմանամ: Ինչպե՞ս կարող եմ իմանալ:

Մերին բարձերը նույն դիրքով թողեց իրենց տեղում, շրջեց մահճակալը, մոտեցրեց պատուհանին ու հարթեց անկողինը: Հետո, խնամքով նորից ծալեց երկրորդ ծածկոցը ու դրեց անկողնու ոտքի կողմը — ոչ, այսպես հարմար չէ, դա

անհանգստություն կպատճառի ամուսնու վնասված ոտքերին: Նա վերցրեց ծածկոցը, կախեց մահճակալից ու մի կողմ քաշվելով, նայեց խնամքով հարդարված անկողնուն: Մի ակնթարթ Մերիին թվաց, թե ինքը չի գիտակցում՝ որտեղ է գտնվում ու ինչի համար է անում այս ամենը: Այնուհետև, վերհիշելով կատարվածը, ցածր ու նվաղուն ձայնով շնչաց. «Ա՛խ»: Նա բացեց պատուհանի վերևի ու ներքևի փակոցափեղկերը, քաշեց վարագույրները և դրանք ամուր ամրացրեց պատուհանի երկու կողմերից: Հետո զուգարանից բերեց գիշերանոթը, ողողեց ու չորացնելով այն՝ դրեց մահճակալի տակ: Այնուհետև դեղերի արկղից վերցրեց ջերմաչափը, թափ տվեց, լվաց սառը ջրով, չորացրեց ու մտցրեց անկողնու մոտ գտնվող ջրով լի գավաթի մեջ: Տեսնելով, որ սեղանի ծածկոցը կեղտոտված է, վերցրեց այն ու նետեց կեղտոտ սպիտակեղենների զամբյուղի մեջ, տեղը փռեց մի նորը, որի եզրերին նախշազարդված էին մանուշակներ ու զառմանուշակներ: Հանկարծ նկատեց, որ բարձի առջևի մասը մի փոքր փոս է ընկել, անմիջապես ուղղեց այն, քաշեց լուսամփոփի անջատիչը, ծնկի իջավ՝ դեմքով դեպի անկողինը ու փակեց աչքերը: Նա երկու մատը միացրեց իրար, կայրեց ճակատին, կրծքին, ձախ և աջ ուսերին ու հետո երկյուղածությամբ միացնելով ձեռքերը՝ խաչակնքեց երեսը:

— Օ՛հ, տեր աստված, թող կամքդ լինի, — շնչաց Մերին: Նա այլևս ի վիճակի չէր մտածել որևէ բանի մասին: Նորից երկյուղածորեն խաչակնքեց երեսը և խաչակնքման զորությունը զգալով, խաղաղվեց:

— Թող քո կամքը կատարվի, — ասաց նա ու կրկին լռեց: Հետո ոտքի ելավ, շրջվեց և առանց լույսը վառելու գնաց խոհանոց: Թեյի համար կրակին դրված ջուրը վաղուց եռացել ու վերջանալու վրա էր: Մինչ Մերին փայտ էր ավելացնում, լսվեցին պատշգամբը մտնող մարդկանց ոտնաձայներ:

Հաննան ներս մտավ երկու ձեռքերը առաջ մեկնած: Մերին երկարեց իրենը, բռնեց դրանք, համբուրեց նրա այտը և երկուսն էլ միաժամանակ ասացին. «Մերի՛», «սիրելի՛ս», բառերը, որից հետո Հաննան շտապեց կախել գլխարկը կախիչից: Այդ ընթացքում Անդրյուն լուռ կանգնել էր դռան մոտ ու սևեռուն նայում էր Մերիին: Նրա աչքերը փայլում էին թռչունի աչքերի պես, որոնց մեջ խստություն ու դաժանություն էր զգացվում: Անդրյուն կասկածամտորեն էր նայում իր քրոջ վրա, կարծես մեղադրում էր նրան կամ ինչոր մեկին: Մերիին թվում էր, թե եղբայրն ուզում է ասել.

— Եվ դու դեռ հավատո՞ւմ ես քո հիմար աստծուն:

Վալտեր Սթարը կանգնել էր դրսում, խավարի մեջ. Մերին հազիվ էր կարողանում տեսնել նրա ակնոցների մեծ ապակիները, բեղերի թողած մութ ու սև հետքը, լայն ուսերի ուրվագիծը:

— Ներս արի, Վալտեր, — ասաց Մերին այնպիսի քնքշանքով, կարծես դիմում էր երկչոտ մի մանուկի:

— Մենք չպետք է հապաղենք, — ասաց Անդրյուն կտրուկ:

Վալտերը առաջ եկավ, քնքշորեն բռնեց Մերիի ձեռքն ու ասաց.

— Մենք չպետք է ուշանանք:

— Աստված օրհնի քեզ, — շնջաց Մերին ու այնպես սեղմեց Վալտերի ձեռքը, որ իր բազուկը դողաց:

Վալտերը մի քանի անգամ թփթփացրեց Մերիի դողացող ձեռքին ու արագ շրջվելով ասաց.

— Ավելի լավ է շտապենք, Անդրյու, — և գնաց դեպի ավտոմեքենան: Մերին լսում էր մեքենայի շարժիչի ձայնը, որը Վալտերը չէր անջատել և նոր միայն հասկացավ տեղի ունեցածի ողջ լրջությունը:

Եթե նա այնքան լավ լինի, որ տուն բերեք նրան, — ասաց Մերին Անդրյուին, — իմացեք, որ ամեն ինչ պատրաստ կլինի այստեղ նրան ընդունելու համար:

— Լավ, կգանգահարեմ, եթե որևէ նոր բան իմանամ:

— Այո, սիրելիս:

Անդրյուի աչքերը լցվեցին, նա հուզմունքով ձեռքը մեկնեց դեպի Մերին ու գրկեց նրա ուսերը:

— Շատ եմ ցավում, Մերի, — ասաց գրեթե լացակումամ:



— Այո, սիրելիս, — ասաց Մերին ինքնաբերաբար և մինչ կզգար իր պատասխանի անհեթեթությունը, Անդրյուն արդեն մեքենա էր նստել: Մերին կանգնել ու նայում էր հեռացող մեքենային և, երբ շրջվեց ներս մտնելու, տեսավ հորաքույր Հաննային:

— Գնանք թեյ խմենք, — ասաց Մերին: — Ջուրն արդեն եռացել է, — և արագ քայլերով գնաց դեպի դահլիճ:

Այնուամենայնիվ թող թեյը դնի, մտածեց Հաննան, հետևելով նրան:

— Աստված իմ, ջուրը գոլորշիացել է: Նստիր, հորաքո՛ւյր Հաննա, մի բոպեից թեյը պատրաստ կլինի: — Նա շտապ մոտեցավ լվացարանին:

— Թող ես . . . — սկսեց հորաքույրը, և հուսաց, որ Մերին չի լսել իր ասածը:

— Ի՞նչ:

— Եթե օգնելու կարիք կա, ասա, Մերի՛:

— Օգնելու ոչ մի կարիք էլ չկա, շնորհակալություն, — Մերին ջուրը դրեց վառարանի վրա:

— Նստիր, հոգյա՛կս, — ասաց Հաննան ու նստեց սեղանի մոտ:

— Որքան գիտեմ, ամեն ինչ պատրաստ է, — ասաց Մերին ու նստեց նրա դիմաց: — Ես կարգավորել եմ ներքևի հարկի ննջասենյակը (ձեռքով ցույց տվեց այդ կողմը), հիշո՞ւմ ես, Ջեյն այնտեղ էր մնում, երբ նրա մեջքը ցավում էր:

«Իհարկե հիշում եմ, — մտածեց Հաննան, — թող խոսի, դա կթեթևացնի նրա վիճակը»:

— Այնտեղ ավելի հարմար է, քան վերևում, — շարունակեց Մերին, — որովհետև վեր բարձրանալու կարիք չի լինի: Խոհանոցն ու լողասենյակը մոտ են այդ սենյակին, և եթե Ջեյը հիվանդապահի կարիք զգա, կարող ենք նրան տեղավորել

ճաշասենյակում, իսկ մենք կճաշենք խոհանոցում կամ վարագույրով որևէ անկյուն կառանձնացնենք հենց Ջեյի սենյակում: Եթե դրան էլ համաձայն չլինի, այդ դեպքում կարող է քնել հյուրասենյակում, օթոցի վրա, իսկ դուռը բաց կթողնենք: Ճիշտ չե՞մ ասում:

— Ճիշտ է, — պատասխանեց Հաննան:

— Ես կփորձեմ գտնել Սելիային, Սելիա Գանին ու կլինդրեմ նրան, որ գա այստեղ, եթե զբաղված չէ: Այսպիսի դեպքերում լավ մի մոտ բարեկամ ունենաս կողքիդ, քան մի անծանոթ, այդպես չէ՞:

Հաննան գլխով հավանության նշան արեց:

— Եթե նույնիսկ նա Ջեյին ավելի մոտ է, քան ինձ, բայց և այնպես իմ ամենահին ընկերուհին է: Կարծում եմ, նրան այստեղ կանչելը ճիշտ կլինի, համամիտ չե՞ս ինձ հետ:

— Իհարկե, համամիտ եմ, — ասաց Հաննան:

— Սակայն կարծում եմ, որ ավելի լավ է սպասենք և ավելորդ տեղը չանհանգստանանք, մինչև որ Անդրյուն մեզ չգանգահարի: Վերջիվերջո, շատ հավանական է, որ Ջեյին ուղիղ հիվանդանոց տանեն: Անծանոթն ասում էր, որ նրա վիճակը լուրջ է:

— Խելացի վարված կլինենք, եթե սպասենք, — ասաց հորաքույրը:

— Ջուրը չի՞ եռում: — Մերին շրջվեց նայելու: — Այ քեզ բան, երբ սպասում ես, չի եռում: — Նա ոտքի ելավ, ուժեղացրեց կրակը և դարակից իջեցրեց թեյի տուփը: — Չգիտեմ, ուզո՞ւմ ես թեյել, թե ոչ, բայց կարծում եմ, որ լավ կլինի մի որևէ տաք բան խմենք, քանի դեռ սպասում ենք, ճիշտ է, չե՞:

— Կուզենայի մի քիչ խմել, — ասաց Հաննան, թեև ոչինչ չէր ուզում:

— Դե լավ, սպասենք մինչև ջուրը եռա: — Նա նորից նստեց իր տեղը: — Եթե գիշերը ցուրտ լինի, կարծում եմ, որ մի բարակ վերմակն էլ բավական է այսպիսի եղանակի համար, չնայած մեկն էլ ոտքերի կողմն եմ դրել:

— Այդքանը բավական է:

— Աստված գիտե, — ասաց Մերին նվաղուն ձայնով ու լռեց: Նա նայեց իր սեղմված ձեռքերին: Հանկարծ Հաննան զգաց, որ ինքը տխուր հայացքով նայում է Մերինն և, կարմրելով, հայացքը հեռացրեց նրանից: Հաննան չգիտեր, թե ինչ անի: Իհարկե, հնարավորության դեպքում ավելի լավ կլինի, եթե Մերին երես առ երես չհանդիպի Ջեյին, մինչև որ բանը ինքնուստինքյան չստացվի: Իսկ եթե այդպես պատահի, ապա լավ կլինի, որ Մերին իրեն հանգիստ պահի, պարզապես չհուզվի, մտածում էր Հաննան:

— Գիտե՞ս ամենատարօրինակն ինչն է, — ասաց Մերին կամաց ու ավերի մեջ սկսեց տրորել սեղմած մատները: Հաննան լուռ էր: — Երբ անձանոթը զանգահարեց, — ասաց նա, նայելով իր դողացող մատներին, — և հայտնեց, որ Ջեյի հետ դեպք է տեղի ունեցել. . . լուրջ դեպք, ես պարզ հասկացա, որ նրա գլուխն է վնասվել, գլուխը: (Հիմա նոր միայն նկատեց, որ Մերին իր գորշ ու փայլող աչքերով իրեն է նայում): — Ի՞նչ ես կարծում, — հարցրեց նա գրեթե հպարտությամբ:

Հաննան շրջեց հայացքը: Մարդ ինչ կարող է ասել նման դեպքում, մտածեց նա: Մինչդեռ Մերին այնպիսի համոզվածությամբ էր խոսում ամուսնու գլխից վիրավորված լինելու մասին, որ ինքն էլ սկսեց կիսով չափ հավատալ դրան: Նա խորը շունչ քաշեց, հոգոց հանեց, ճտտացրեց լեզուն և ասաց.

— Դժվար է ասել:

— Այո: Պարզապես մենք պետք է սպասենք, — ասաց Մերին երկար լռությունից հետո:

— Շշ՜շ, — ընդհատեց նրան Հաննան քնքշանքով:

Տևական լռությունից հետո նրանք նկատեցին, թե ինչպես է եռում ջուրը: Սոտենալով, Մերին տեսավ, որ թեյամանի ջուրը պակասել էր:

— Երկու բաժակի կրավականացնի, — ասաց նա և, վերցնելով քամիչը, լցրեց թեյն ու թեյնիկի մեջ ջուր ավելացրեց: Հետո բացեց կրակին դրված մեծ ամանի կափարիչը: Ամանի ներսում, ջրի գծից ներքև, եռփից մի սպիտակ գիծ էր գոյացել: Ջուրը ուժեղ եռում էր: Մերին փորձեց հիշել, թե ինչի համար էր այն եռացրել:

— Բոլոր դեպքերում թող լինի, — շնջաց նա:

Հաննան չուզեց հարցնել, թե նա ինչ ասաց:

— ՋուՋուս կա, — ասաց Մերին և հանեց պահարանից: — Բայց գուցե հաց ու կարագ ես ուզում կամ տապակած հա՞ց: Կարող եմ տապակել:

— Ոչինչ չեմ ուզում, միայն թեյ, շնորհակալություն:

— Շաքարով կաթ խմիր: Միգուցե լիմոն՞ն: Տեսնեմ լիմոն . . .

— Կաթ, — ասաց Հաննան:

— Ես էլ կաթ կխմեմ, — ասաց Մերին ու նստեց: — Ինձ համար շատ շոգ է, շոգ է այստեղ: — Նա վեր կացավ, բացեց պատշգամբի դուռը ու նորից նստեց:

— Տեսնես ժամը քանիսն է . . . — Նա ուսի վրայով նայեց խոհանոցի ժամացույցին: — Ժամը քանիսի՞ն մեկնեցին, չե՞ս հիշում:

— Վալտերն այստեղ եկավ տասն անց տասնհինգ րոպեին: Քսանհինգ րոպե կլինի:

— Արի հաշվենք: Վալտերն արագ է քշում, բայց ոչ Ջեյի նման: Նա այս գիշեր սովորականից ավելի արագ կքշի, մինչև այստեղ տասներկու մղոն է: Ենթադրենք, թե նա ժամում անցնելու է երեսուն մղոն արագությամբ. մինչև այստեղ տասներկու մղոն է: Հիմա հաշվենք՝ վեց անգամ չորս, հավասար է քսանչորսի, վեց անգամ հինգ՝ երեսուն, երկու անգամ տասներկու՝ քսանչորս: Ի սեր աստծո, ես միշտ էլ մաթեմատիկայից թույլ եմ եղել . . .

— Գիտե՞ս, կես ժամից մուտքը կընկնի, Վալտերը ծանոթ չէ այդ ճանապարհներին:

— Ուրոր է՝ նրանք կգան: Տասը, տասնհինգ բուլեից այստեղ կլինեն:

— Այո, ես էլ եմ այդպես կարծում:

— Հնարավոր է՝ քսան բուլեից, նայած ճանապարհներին, բայց այնտեղից եկող ճանապարհները լավն են:

— Շատ հավանական է:

— Ինչո՞ւ անձանթն ինձ չասաց, — բռնկվեց Մերին:

— Ինչի՞ մասին է խոսքը:

— Ինչո՞ւ ես չհարցրեցի: — Նա շփոթված ու զայրացած նայեց հորաքրոջը: — Ես նույնիսկ չհարցրեցի նրա վիճակի մասին, նույնիսկ չիմացա՝ կենդանի է, թե մեռած:

«Դե ինչ արած», ասաց Հաննան ինքն իրեն: Նա նայեց ուղիղ Մերիի աչքերի մեջ ու ասաց.

— Մեզ միայն մի բան է մնում, սպասել ու տեսնել:

— Իհարկե, — գոչեց Մերին զայրացած: — Բանն այն է, որ սպասելն է անտանելի: — Նա մի մեծ կում թեյ խմեց, որը խիստ այրեց կոկորդը, բայց ուշադրություն չդարձրեց և շարունակեց նայել հորաքրոջը:

Հաննան չգիտեր, թե ինչ ասի:

— Կներես, — ասաց նա: — Դու միանգամայն ճիշտ ես: Ես ինձ արդեն հավաքեցի, ամեն ինչ կարգին է:

— Ոչինչ, — ասաց Հաննան ու երկուսն էլ լռեցին:

Հաննան լավ էր հասկանում, որ լռությունն ինքնին պետք է որ անտանելի լիներ Մերիի համար, և այն տեղիք էր տալու զանազան ենթադրությունների, որոնք նրան դնելու էին ավելի ծանր հոգեվիճակի մեջ: Սակայն նա պետք է դուրս գար այդ վիճակից, և որքան շուտ, այնքան լավ: Հաննան գտնում էր, որ ինքը պարտավոր է սփռփիչ խոսքեր ասել եղբոր աղջկան: Եվ այն է, ուզում էր ինչոր միսիթարական բան ասել նրան, երբ Մերին պոռթկաց.

— Օ՛, տեր աստված, ինչո՞ւ չհարցրեցի անձանոթին: Ինչո՞ւ: Մի՞թե չէի հետաքրքրվում նրանով:

— Այնքան հանկարծակի եղավ, — ասաց Հաննան: — Դա մեծ հարված էր:

— Ինչ է, չէ՞ի կարող հարցնել, ճիշտ չէ՞:

— Ճիշտ է: Դու կարծում էիր, որ գիտես: Ինձ ասացիր, որ նրա գլուխն է վնասվել, գլուխը:

— Բայց ինչքա՞ն, ինչպե՞ս . . .

Երկուսս էլ գիտենք, մտածեց Հաննան:

— Բայց լավ է, որ ինքդ ասես: Որովհետև պարզ չէր, թե ինչ էր պատահել, և դու էլ չանհանգստացար, ինչ արած, — ասաց նա:

— Ոչ, ոչ: Իրականում այդպես չեղավ: Բանն այն է, որ կարծում էի գիտեմ, թե ինչ է պատահել Ջեյին: Ես մտածում էի . . . ինձ թվում էր, թե շատ կվախենայի, եթե անձանոթը միանգամից ասեր կատարվածի մասին:

Հաննան նայեց նրա աչքերի մեջ: Համամիտ եմ քեզ հետ, ասաց նա ինքն իրեն: Ասեմ այդ, թող մտածի, որ ես էլ էի այդպես պատկերացնում . Մերիի համար անտանելի կլինի, եթե ոչինչ չասեմ: Քիչ առաջ, երբ Հաննան համարձակություն ունեցավ հարցնելու. «Գիտե՞ս. թե ինչու հայրդ ու մայրդ տանը մնացին», Մերին ընդհատեց նրան.

— Այո, ես էի նրանց ասել, որ տանը մնան:

— Ինչո՞ւ:

— Նրա համար, որ, եթե նրանք բոլորն այստեղ գային, վատ տպավորություն կթողներ. . . մարդիկ կմտածեին, որ մահվան դեպք է: Նման բան չպետք է արվի, քանի դեռ ոչինչ չգիտենք կատարվածի մասին:

— Ահա թե ինչու նրանք այստեղ չեկան: Քո հայրն ասաց, որ դու կհասկանաս այդ:

— Իհարկե, հասկանում եմ:

Նրանք այլևս ոչ մի պատճառի մասին չխոսեցին: Մերիի մոր խլությունը ստիպում էր, որ որևէ բան հասկացնելու համար լսափողով խոսեն հետը:

— Մենք չպետք է փորձենք որևէ ենթադրություն անել լավի կամ վատի վերաբերյալ, քանի դեռ ոչինչ չգիտենք կատարվածի մասին, — ասաց Հաննան:

— Գիտեմ, հասկանում եմ, որ չպետք է. . . Իրոք, անտանելի բան է, երբ անորոշության մեջ ես ու ստիպված ես սպասել:

— Շուտով կիմանանք:

Մերին նայեց ժամացույցին:

— Ամեն վայրկյան նրանք կարող են այստեղ լինել, — ասաց նա:

Նա մի կում թեյ խմեց:

«Չեմ հասկանում, ինչո՞ւ անձանոթն ավելին չասաց, — մտածեց Մերին: — Նա ասում էր, որ լուրջ դեպք է, ոչ շատ լուրջ: Պարզապես լուրջ: Թեև աստված գիտի, թե ինչքան լուրջ: Բայց ինչո՞ւ չասաց»:

— Ինչպես հայրդ է ասում, նա կատարյալ ապուշ է, այդ այնքան պարզ է, ինչպես մեկ անգամ մեկը, — ասաց հորաքույր Հաննան:

— Բայց դա շատ կարևոր բան է, և պետք է ասվեր, գոնե մեզ մի փոքր տեղյակ պահելու համար: Նույնիսկ չիմացանք, նրան հիվանդանոց են տանելու, թե տուն են բերելու. . . Անձանոթը շտապ օգնության մասին էլ ոչինչ չասաց, գոնե այդ կերպ պարզ կլիներ: Եվ իրոք, եթե նա վատը նկատի ունենար, ապա կարծում եմ, որ ուղղակիորեն կասեր, և մեզ չէր թողնի այսպիսի անորոշ վիճակի մեջ: Հորաքույր Հաննա, գիտեմ որ իրավունք չունենք երկնային գործերով զբաղվելու՝ վատ լինի դա, թե լավ, բայց համոզված եմ, որ մենք լավը հուսալու պատճառներ ունենք: Ինձ թվում է, եթե. . .

Հնչեց հեռախոսագանգը, որը երկուսին էլ մահու չափ վախեցրեց, որովհետև նման վիճակում երբեք չէին գտնվել: Նրանք նայեցին իրար, տեղներից վեր կացան և ուղղվեցին հյուրասենյակ:

— Ես. . ., — ասաց Մերին՝ թափահարելով աջ ձեռքը, կարծես Հաննային մնաս բարով էր ասում ընդմիջտ:

Հաննան տեղից չջարժվեց, խոնարհեց գլուխը, փակեց աչքերն ու խաչակնքեց երեսը:

Երկրորդ զանգից հետո Մերին վերցրեց լսափողը, բայց մի պահ չգիտեր, թե ինչ անի, խոսի՞, թե՞ չխոսի:

— Տեր իմ, օգնիր ինձ, — շնջաց նա: — Անդրկո՞ւ:

— Փո՞ւլ:

— Հայրիկ: — Սարսափն ու վախը համազոր էին Մերիի մեջ: Քեզ որևէ բան հայտնի՞ է:

— Իսկ քե՞զ:

— Ոչ, — պատասխանեց Մերին: — Անդրյուից տեղեկություն ունե՞ս:

— Ոչ: Կարծում էի, որ դու կունենաս:



- Չունենա: Դեռ ոչինչ չգիտենա:
- Ես քեզ վախեցրի:
- Ոչինչ հայրիկ: Ամեն ինչ լավ է:
- Կներես Փոլ: Ես չպետք է զանգահարեի:
- Մի անհանգստացիր:
- Մեզ տեղյակ պահիր, երբ որևէ բան իմանաս:
- Անպայման, հայրիկ: Անմիջապես կզանգահարենա:
- Գա՞նք այդտեղ:
- Աստված սիրես, ոչ, հայրիկ, ավելի լավ է սպասեք: Բոլորովին հուզվելու կարիք չկա, քանի դեռ մեզ ոչինչ հայտնի չէ: Ճիշտ չե՞մ ասում:
- Ճիշտ է աղջիկս:
- Բարևիր մայրիկին:
- Քեզ նույնպես բարևներ, իմ և մորդ կողմից: Չմոռանաս զանգահարել:
- Չէ, չեմ մոռանա: Ցտեսություն:
- Փո՛լ:
- Լսում եմ:
- Գիտես, թե դա որքան ծանր է ինձ համար:
- Գիտենա, հայրիկ, անչափ շնորհակալ եմ: Կարիք չկա ասելու:

— Երբեք չէի ասի, եթե ուզենայի էլ: Նույնը կասեի նաև մորդ՝ Ջեյի ու քո մասին: Հասկանո՞ւմ ես ինձ:

— Այո, հասկանում եմ, հայրիկ: Ցտեսություն:

— Չանգահարողը հայրիկն էր, — ասաց Մերին ու նստեց ծանր սրտով:

— Կարծեցի, թե Անդրյուն էր:

— Դե... — Մերին թեյ խմեց: — Անդրյուն խելագարվելու աստիճան վախեցնում է ինձ:

— Նրա մտքով չի անցնում, որ զանգահարի: Կատարելապես հիմարացել է:

— Ես նրան չեմ մեղադրում: Կարծում եմ, որ նրանց համար այնտեղ նստելն ավելի ծանր է, քան մեզ համար՝ տանը:

— Դրանում ես համոզված եմ, — ասաց Հաննան:

— Հայրիկն էլ է շատ տանջվում:

— Գիտեմ, — ասաց հորաքույրը: — Ուրախ եմ, որ դու հասկանում ես այդ:

— Իհարկե, հասկանում եմ ու գիտեմ, թե իրականում որքան շատ է նա մտածում Ջեյի մասին:

— Օ երկինք, հուսով եմ, որ դու էլ ես նրա մասին հոգում:

— Դե, երկար ժամանակ ես ու մաման ոչ մի հիմք չունեինք համոզվելու, որ հայրիկը սիրում է Ջեյին, — վրա բերեց Մերին կորովով:

Մեկ րոպե լռելուց հետո շարունակեց.

— Դու և մաման գիտեիք այդ, հորաքույր Հաննա, թեև աշխատում էիք ցույց չտալ, բայց ես գիտեի՝ դուք էլ գիտեիք, որ ես գիտեմ: Հիմա ամեն ինչ կարգին է:

Հաննան անթարթ նայում էր նրա աչքերի մեջ:

— Այո, դա ճիշտ է, Մերի: Գոյություն ունեին անվստահություններ շնչող ամեն տեսակի անհիմն կասկածներ, որոնց մասին դուք հետո իմացաք:

— Բավականին հիմքեր կային, — ասաց Մերին: — Բայց դրանք ոչ մի բանով չէին օգնում մեզ:

— Մեզ նույնպես, — ասաց Հաննան: — Հատկապես քեզ ու Ջեյին: Հայրիկիդ ու մայրիկիդ նույնպես, ինչպես նաև նրանց, որոնք սիրում են ձեզ:

— Գիտեմ, գիտեմ, հորաքույր Հաննա: Չեմ հասկանում, թե ինչու բռնեցի այս ընթացքը: Գոհություն ասածուն, մեզնից ոչ մեկի համար այլևս դժգոհելու, հուզվելու կամ վշտանալու կարիք չկա ու չի էլ լինի երկար ժամանակ: Հանուն ինչի ես շեղվեցի գործից: Արի այլևս այդ մասին չխոսենք:

— Մի խոսք ևս, որովհետև համոզված չեմ, որ դու երբևիցե մտածել ես, թե հայրդ սկզբիցնեթ որքան շատ է սիրել Ջեյին:

Մերին կասկածամտորեն ու վիրավորված նայեց հորաքրոջը: Նախքան խոսելը նա լավ մտածեց իր ասելիքի մասին:

— Գիտեմ: Նա միշտ ասում էր ինձ, որ սիրում է Ջեյին: Բայց ամեն անգամ ավելացնում էր, որ սխալ եմ արել՝ ամուսնանալով նրա հետ: Երբ արդեն բավականին ժամանակ էր անցել, նա ավելի շատ սկսեց մտածել Ջեյի մասին:

— Հայրդ նրա կյանքի ընթացքի մասին է մտածում, — վրա բերեց Հաննան:

— Բայց ոչ: Երբեք չեմ համոզվի, որ նա սիրել կամ հարգել է Ջեյին և երբեք չեմ հավատա: Կարծում եմ, որ դա նրա կողմից մի տեսակ կեղծավոր քայլ է:

— Քո հայրը կեղծավոր է:

— Ոչ, — ասաց Մերին քմծիծաղով: — Սովորաբար այդպիսին չէ: Բայց ինչ կարող եմ մտածել, երբ նա մի կողմից Ջեյին երկինք է հանում, իսկ մի ուրիշ դեպքում նույն շնչով ասում, որ ես հիմարություն եմ արել՝ ամուսնանալով նրա հետ: Նման դեպքում ի՞նչ կմտածեիր դու: Չե՞ս տեսնում, որ դրանք հակասում են իրար:

Մի րոպե մտածելուց հետո նա շարունակեց.

— Չգիտեմ, հորաքույր Հաննա: Չէ, բոլորովին չեմ հասկանում, թե ինչու. . .

— Դու գիտես, Մերի:

— Գիտե՞մ:

— Այո: Դու գիտես Մերի, թե ինչքան շատ բան կա, որի համար քո հայրը. . . մեր բոլոր անհաջողություններով հանդերձ. . . բայց իմանալով այդ բոլորի մասին, դու չփոխեցիր կարծիքդ հորդ մասին: Ճիշտ չե՞մ ասում: Քեզ թվում է, թե կարող ես երկու բան միանգամից հասկանալ:

— Այո, դա ճիշտ է:

— Մերի, մենք պետք է ավելի շատ ճանաչենք այն, ինչը այնքան էլ լավ չէ, իսկ դու՝ այն, ինչը այնքան էլ վատ չէ:

Մերին քմծիծաղը դեմքին նայեց հորաքրոջը:

— Հիմա ինձ համար միևնույն է: Երբ ամուսնացա միամիտ էի, — ասաց նա: — Երբ տանը որևէ վեճ էր լինում, բոլորն էլ հայրիկին էին արդարացի համարում, թեև ես ավելի ճիշտ էի, քան նա: Ճիշտ չե՞մ ասում:

«Ինձ մի հարցրու, աղջիկս, ինքդ ասա», — մտածեց Հաննան:

— Իհարկե ճիշտ չես, — ասաց նա:

Մի րոպե լուռ մնալուց հետո Մերին խոհեմաբար ու հպարտորեն ասաց.

— Հորաքույր Հաննա, վերջին այս մի քանի ամիսներին մենք մի տեսակ համաձայնության եկանք, որ . . . Մերին սկսեց թափահարել գլուխը: — Ես այլևս չեմ ուզում այդ մասին խոսել: — Նրա ձայնը դողում էր հուզմունքից: — Հիմա ոչ ոք չի կարող բողոքել . . . — Նա կծեց շրթունքները, նորից թափահարեց գլուխը և աղմուկով խմեց թեյը: — Մեր խոսելու եղանակը, — բռնկվեց նա, աշխատելով կուլ տալ թեյը, — նման է ետմահու . . .

Նա դեմքը թաղեց ձեռքերի մեջ ու սկսեց հեկեկալ: Հաննան արագ մոտեցավ նրան:

— Աստված օգնի Ջեյին, — շշնջաց նա: — Աստված պահպանի նրան:

Որոշ ժամանակ անց, երբ Մերին նորից նայեց հորաքրոջը, Հաննան նկատեց, որ նրա աչքերը պարզվել էին, իսկ դեմքը զարմանք էր արտահայտում:

— Եթե նա մահանա, կամ, արդեն մահացել է, հորաքույր Հաննա, չգիտեմ, թե ինչ պետք է անեմ: Պարզապես չգիտեմ, — ասաց Մերին:

— Աստված քեզ օգնական, — ասաց հորաքույրը և մոտենալով Մերիին, բռնեց ձեռքը: — Աստված պահպանի քեզ:

Մերիի դեմքը լարված էր, հուզմունքից աչքերը մթնել էին:

— Մերի, ինչ էլ որ պատահի, քեզ պետք է հանգիստ պահես: Պարզապես չպետք է հուզվես ու վախենաս:

Մերին զսպեց լացը:

— Պետք է պատրաստ լինել ամեն մի դժբախտության, — շարունակեց Հաննան: — Բայց մենք չպետք է մոռանանք, որ դեռ ստույգ ոչինչ չգիտենք Ջեյի մասին:

Հենց այդ պահին երկուսն էլ նայեցին ժամացույցին:

— Համոզված եմ, որ հիմա կզանգահարի, — ասաց Մերին: — Վաղուց զանգահարած կլինեք, եթե Ջեյին դժբախտություն պատահած չլինեք ու... Մերին բարձրաձայն ծիծաղեց:

— Վստահ եմ, որ հենց հիմա կզանգահարի, — ասաց Հաննան: «Վաղուց զանգահարած կլինեք, եթե Ջեյը ծանր չլինեք», — մտածեց Հաննան: Նա բռնեց Մերիի բռունցք արած ձեռքն ու բացեց: Հետո զգալով, որ նման դեպքում գրեթե անհնարին է մխիթարել, ձեռքը նորից ետ քաշեց: Այսպիսի դեպքերում, երբ մխիթարելու ավելի շատ կարիք կա, ավելի լավ է ոչինչ չասել:

Մերին լուռ էր: Հաննան նույնպես: Նա հասկանում էր, որ որևէ բան ասելը անմտություն է, և դրանից իրեն մի տեսակ շփոթված էր զգում: «Վերջիվերջո, ի՞նչ կարելի է ասել նման դեպքում: Ի՞նչ էական օգնություն կարող եմ ցույց տալ ես կամ մեկ ուրիշը»:

Հանկարծ նա իրեն այնքան հոգնած ու ծանրացած զգաց, որ ցանկացավ ճակատը հենել սեղանի եզրին:

— Ստիպված ենք սպասել, — ասաց Մերին:

— Այո, — հոգոց հանեց Հաննան:

«Լավ կլինի մի քիչ թեյ խմենք», — մտածեց նա և խմեց: Ջերմացած ու ավելի դառնացած՝ իրեն ավելի հոգնած զգաց:

Նրանք լուռ էին, գրեթե երկու րոպե ոչ մի բառ չէին փոխանակում:

— Մենք կարճ ժամանակով հանձնված ենք ժամանակի ողորմածությանը, — կամացուկ ասաց Մերին, — անտանելի է, երբ ստիպված ես սպասել: Փորձենք պատրաստ լինել ու չվախենալ գալիք դեպքերից:

Մերին ուշադիր նայում էր իր դատարկ բաժակի մեջ, կարծես ինչոր բան էր տեսել այնտեղ:

Հաննան անհարմար էր զգում որևէ բան ասել:

— Ինչ էլ որ լինի, արդեն եղելվերջացել է, — ասաց Մերին ցածր ձայնով:

Նա խոսում էր ըստ էության, առանց զգացմունքների: Կշտացել էր զգացմունքներ ունենալուց: Հաննան համոզված էր, որ Մերին արդեն հասկացել է կատարվածը և խիզախորեն ընդունել այն: Հիմա նրանք նայում էին իրար անթարթ աչքերով:

— Երեքից մեկը, — ասաց Մերին մեղմ ձայնով: — Ջեյը կամ մարմնական ծանր վնասվածք է ստացել, բայց կապրի ու նույնիսկ ամբողջովին կլավանա, վատագույն դեպքում կդառնա անօգնական մի անդամալույծ կամ անաշխատունակ, իսկ ծայրահեղ դեպքում՝ թուլամիտ:

Հաննան ցանկանում էր, որ Մերին հեռուն տեսնի, թեև կարծում էր, որ այդ բանը նա անկարող է անել:

— Կամ էլ նա այնքան ծանր վնասվածք է ստացել, որ կմեռնի դրանից, հավանական է շատ շուտով, երկար տանջաքից հետո: Իր վերջին շունչը կփչի ու կցանկանա իմանալ, թե որտեղ եմ ես, ինչու իր կողքին չեմ:

Մերին պրկեց շրթունքները, սեղմեց ատամներն ու շարունակեց.

— Կամ էլ՝ մահացած է եղել այն ժամանակ, երբ անձանոթը զանգահարեց ինձ, և խեղճ մարդը երևի չցանկացավ ինքը հայտնել այդ մասին: Երեքից մեկը, կարևոր չէ, թե որը: Աշխարհում չկա մի բան, որ կարողանա մազաչափ անգամ փոխել այն, ինչ կատարվել է, որքան էլ որ մենք ցանկանանք, հուսանք կամ աղոթենք: Որովհետև ինչ եղել է, արդեն եղել է: Եվ այն բոլորը, ինչ կա այստեղ, պետք է պատրաստ պահել, ինչ էլ որ լինի: Ահա բոլորը: Կարևորը դա է, որովհետև միակ հնարավորությունը այս է: Ճիշտ չէ՞:

Մինչ Մերին խոսում էր, ձայնով, հայացքով, ամեն մի բառով Հաննային հիշեցնում էր, բացի մոռացված մի քանի ժամերից, երեսուն տարի առաջ ապրած իր կյանքը, որի պատճառած տառապանքները վերստին ամբողջովին համակեցին նրան, և նա վերհիշեց, թե ինչպես ինքը վարժվեց համբերությամբ տանել այդ ամենը: Այժմ քո հերթն է, խեղճ երեխա, մտածեց Հաննան:

Նա գնալով ծերանում է, անցավ Հաննայի մտքով: Այս մի քանի րոպեների ընթացքում Մերին ավելի էր ծերացել ու մոտեցել իր մահվանը, և Հաննան գոհ էր, որ նա դեռ կենդանի է: Երբ յուրաքանչյուր նեղություն, իրենը լիներ, թե ուրիշինը, իր ամբողջ գոյությամբ ու տևողությամբ հաղթահարվում էր (հիշողությունները խուժում էին նրա գլուխը), Հաննայի սիրտը լցվում էր ուրախությամբ: Հիմա նա հպարտանում էր Մերիով և ցանկանում էր գոռալ. «Այո՛ . . . Այո՛, դա ճիշտ է: Սկսիր հասկանալ: Այժմ քո հերթն է: Հորաքույրն ուզում էր հանգիստ բռնել եղբոր աղջկա ձեռքից, շրջել դեպի իրեն ու հիանալ նրա հասունացմամբ: Նա ցանկանում էր գրկել Մերիին և հառաչանքով դիմել աստծուն՝ ի՞նչ է նշանակում գոյություն ունենալ: Մակայն նա նախընտրեց լռել և լսել երիտասարդ կնոջ ձայնը, նայել նրա աչքերին, կլոր ճակատին՝ հասկանալու համար այն ամենը, ինչ կատարվում էր Մերիի հետ, մի բան, որ նրան հիշեցնում էր իր երիտասարդ տարիների կյանքը, և նրա հոգին լցնում հպարտությամբ:

— Ճիշտ չէ՞, — կրկնեց Մերին:

— Ճիշտ է, նույնիսկ ավելի, — ասաց Հաննան:

— Դու նկատի ունես աստծու ողորմածությունը, — հարցրեց Մերին մեղմորեն:

— Ոչ մի այդպիսի բան, — պատասխանեց Հաննան կտրուկ: — Ինչոր էս նկատի ունեմ, լավ կլինի, որ չասեմ: «Ես ցնցեցի նրա հոգին ու խոցեցի նրա սիրտը, կարծես դեմ եմ խոսում աստծուն», և նորից անդրադարձավ իր ասելիքին: — Միայն նրա համար, որ ավելի լավ կլիներ՝ ինքդ իմանայիր, քո սեփական փորձով: Միայն ինքդ:

— Ի՞նչը նկատի ունես:

— Ինչ որ մենք լսում ենք ու սովորում, Մերի, պարզ է, որ դժվար է, ողբերգականորեն ծանր: Հիմա դու սկսում ես հասկանալ ու ճանաչել կյանքը: Այժմվանից սկսած դու ավելին կիմանաս: Իմ ցանկությունը հենց դա է, և սա միայն սկիզբն է:



— Ինչ էլ որ լինի, ես ուզում եմ արժանի լինել դրան, — ասաց Մերին փայլող աչքերով:

— Շատ մի ձգտիր արժանի լինել դրան, Մերի: Նման բանի մասին այդ ձևով մի մտածիր: Պարզապես դիմացիր և թույլ մի տուր, որ արժանի լինելու հոգսը տիրի քեզ: Այդ արդեն բավական է:

— Դեռ ինձ պատրաստ չեմ զգում, շատ քիչ ժամանակ կա պատրաստվելու համար:

— Ես չեմ կարծում, որ պետք է նախօրոք պատրաստվել. դա փորձով զգալու բան է:

Հաննան զգում էր, որ նրա մեջ կար պատվախնդրության, հպարտության կամ բանաստեղծականության պես ինչոր բան, որը շատ սխալ էր ու վտանգավոր: Հաննան լրիվ համոզված չէր, թե ինչ էր մտածում Մերին և ինչու էր միշտ վիճում իր հետ, առարկում իրեն: Թերևս այն պատճառով, որ նա շատ երիտասարդ էր ու անփորձ: Խեղճ աղջիկ, նա դեռ կսովորի:

Եվ երբ Հաննան նայեց Մերիին, ցրվածության ու խոնարհության արտահայտություն նկատեց նրա դեմքին:

— Օհ, դեռ ոչ, — շշնջաց Հաննան հուսահատորեն, — դեռ ոչ:

Մերին մի փոքր ամաչելով ասաց.

— Հորաքույր Հաննա, կարո՞ղ ենք մի բուրբուրով ծնկի գալ:

Դեռ ոչ, ուզեց ասել հորաքույրը: Կյանքում առաջին անգամ նա մտածեց, թե ինչքան սխալ կարող է օգտագործվել աղոթքը, բայց չգիտեր, թե ինչու: Ինչ կարող էմ ասել, մտածեց նա գրեթե շփոթված: Ես ինչպես կարող եմ դատել:

Հաննան երկար ժամանակ լուռ էր: Մերին երկյուղած, ժպիտը դեմքին ու շփոթված նայում էր հորաքրոջը: Վերջինս կարեկցելով նրան, ինքնավարանումով մոտեցավ սեղանին, և նրանք ծնկի եկան կողքկողքի: «Մեզ կարող են տեսնել, —

մտածում էր Հաննան, որովհետև վարագույրները բաց են: Դե հետո ինչ, թող տեսնեն, բարկացած ասաց նա ինքն իրեն»:

— Հորը և Որդուն և Հոգվույն սրբո, ամեն, — ասաց Մերին մեղմ ձայնով:

— Ամեն, — հետևեց նրան հորաքույրը:

Մի պահ լռեցին: Լսվում էր ժամացույցի ձայնը, կրակի ճրթճրթոցն ու մեծ ամանի մեջ եռացող ջրի քլթքլթոցը:

«Աստված չկա», — անցավ Հաննայի մտքով ու, վախեցած իր աստվածուրացությունից, խաչակնքեց երեսը:

— Օ՛, տեր իմ, ուժ տուր ինձ, որ կարողանամ կատարել քո կամքը, ինչ էլ որ պատահի, — շնջաց Մերին:

«Աստված լսում է նրան», — մտածեց Հաննան: — Մեղա քեզ, տեր աստված, մեղա:

Ինչ իմանայի, թե երբ էր գալու նրա հեռանալու ժամը, Աստված, ներիր ինձ»:

Հաննան դեռ չէր կարողանում ազատ զգալ իրեն, նրա հավատարմության մեջ ինչոր սխալ բան կար, որն անտանելիորեն ողորմելի էր ու անսահմանորեն վնասակար: Նա նույնիսկ չէր կարողանում ազատվել դրանից ու ճանաչել իր էությունը:

Հանկարծ Հաննայի առջև բացվեց անեզր անդունդով վիհը և այնտեղից դուրս ժայթքեց հավիտենական խավարի կաթվածահար անող շունչը: Բայց և այնպես նա չէր հավատում ոչ մի բանի:

— Հայր մեր, — ասաց Հաննան ինքն իրեն տարօրինակ ձայնով և Մերին, անտեղյակ հորաքրոջ երկյուղին, միացավ նրան: Աղոթքի ընթացքում Հաննան հետզհետե ավելի պարզ սկսեց լսել Մերիի երիտասարդ, ջերմ, անկեղծ, հավատով լի, սրտաբուխ ձայնը և, ասես աստծո գթությունն զգալով, մոռացավ իր սարսափելի հավատուրացությունը:

«Չարից մեզ ազատիր», — կրկնեց Հաննան մտքում մի քանի անգամ, նախքան աղոթքը վերջացնելը: Նրա մեջ եղած չարությունն ու գրասիրությունը դեռ շարունակում էին միմյանց հակադրվել:

Նրանք ոտքի ելան:

Ժամացույցի միալար չիկչիկոցից ավելի ու ավելի պարզ էր դառնում, որ հիմա, ուրոր է Անդրյուն կհասնի դեպքի վայր ու կգանգահարի, և նրանք գրեթե լուռ սպասում էին: Աղոթքից մի փոքր անց, ի մխիթարություն իրենց, Մերին սկսեց շատախոսել այնպիսի բաների մասին, որոնք ոչ մի կապ չունեին տեղի ունեցածի հետ: Նա նույնիսկ սկսեց կատակներ անել ու ծիծաղել, իհարկե, մի փոքր գրգռված: Հաննան դա անհրաժեշտություն էր համարում (նման դեպքում միակ հնարավոր բանն է, որ մարդ կարող է անել), բայց այդ բոլորը շուտով մոռացվեց: Այժմ նրանք անձայն նստել էին խոհանոցի սեղանի մոտ և թեյ էին խմում, չնայած բոլորովին դրա կարիքը չունեին: Մերին թեյ պատրաստեց և երկուսով սկսեցին խոսել թեյի մասին: Հետո Մերին գնաց թեյին խառնելու համար ջուր տաքացնելու: Այդպիսի կարճատև խոսակցությունները միշտ վերջանում էին լռությամբ: Մերին, «Ներեցեք ինձ» շնջալով գնաց լողասենյակ: Նա մի տեսակ իրեն բռնադատված ու ստորացված էր զգում, որ գիշերային այս ուշ ժամին ստիպված էր ենթարկվել բնական պահանջին: Նրան թվում էր, թե ինքը նման է մի երեխայի, որին հարկադրաբար նստեցրել են գիշերանոթի վրա: Դա այլանդակ ու գռեհիկ էր թվում նրան: Հետո նա ձեռքերը մտցրեց լվացարանի սառը ջրի տակ ու հանկարծ հայելու մեջ նկատեց իր դալկացած ու համրացած դեմքը: Այնուհետև, ի զարմանս իրեն, զգաց, որ այդ ամբողջ ժամանակ նայել էր հայելու մեջ: Մենակ մնալով սենյակում, Հաննան մտածեց, որ բոլոր մարդիկ էլ անասուններ են: Այդ հիմար, նվաստ ու անասնական պահանջներն են, որ առաջնորդում են նրանց, այնպես, ինչպես աղոթքը: Եվ մինչ Մերին կվերադառնար, ազատվելով ավելորդ մտքերից ու զգացմունքներից, շնջաց. «Նա մահացել է, այլևս կասկածելու կարիք չկա» և սկսեց աղոթել ու խաչակնքել երեսը հանուն մեռածների: Սակայն հիշելով, որ դեռ ոչինչ չգիտեն Ջեյի մասին, զգաց, որ ինչ վիճակում էլ որ Ջեյը լիներ, մեղք է գործում՝ աղոթելով հանուն նրա հոգու փրկության:

Մերին վերադարձավ սենյակ, կրակի վրա փայտ ավելացրեց, հետո նայեց կրակի վրա դրված մեծ ամանի մեջ և տեսնելով, որ ջուրը եռալուց կիսով չափ պակասել էր, ավելացրեց: Նրանք այլևս ոչինչ չէին խոսում Ջեյի մասին, որովհետև

յուրաքանչյուրը գիտեր, թե մյուսը ինչ է մտածում: Մոտ տասը բոպէ լուռ նստելուց հետո Մերին նայեց հորաքրոջը: Վերջինս հայացքը հառել էր իրեն, և, նայելով նրա աչքերի մեջ, Մերին շատ հանգիստ ասաց.

— Ես շատ կուզենայի, որ նրա մասին տեղեկություն ստանայինք, որովհետև հիմա պատրաստ եմ դրան:

Հաննան գլխի շարժումով հավանության նշան արեց, զգալով, որ նա պատրաստ է: «Ինչ լավ է, որ ես չեմ ուզում նույնիսկ ձեռքով հուզել նրան»: Հորաքրոյրն ինչոր փայլուն ու փառավոր բան զգաց Մերիի մեջ: Նրա գլխում մի միտք ծագեց. «Հիմա նա կարող է տանել վատագույնը, ինքնուրույն է հասել դրան, առանց իմ կամ նույնիսկ աստծու օգնության: Օգնիր նրան, տեր»:

— Հասկանալի է, որ լուրերն այնքան էլ վատ չեն, որքան մենք ենք պատկերացնում: Անդրյուն չափից ավելի շատ է ուրախացել, որպեսզի նեղություն կրի տուն զանգահարելու, քանի որ Ջեյին հիվանդանոցի փոխարեն ուղիղ տուն է բերում ի զարմանս մեզ: Դա նրան բնորոշ գիծ է: Եթե իրոք ամեն ինչ այդպես է, եթե Անդրյուի նման նրա գիտակցությունն էլ տեղն է և միասին ուղիղ այստեղ են գալիս մեզ բոլորիս զարմացնելու՝ դրանից բավականություն ստանալու համար, ապա չեն պատկերացնում, թե մենք ինչքան ենք վախեցել, — շարունակեց Մերին:

Նրա փայլող աչքերից և ուրախ դեմքից թվում էր, թե հավատում է իր ասածին, գրեթե վստահ էր, որ մի քանի բոպէից հետո ամեն ինչ կլինի հենց իր ասած ձևով:

— Դա հավանական բան է, պարզապես՝ միլիոնից մեկ հնարավորություն: Եվ քանի որ կա այդպիսի հնարավորություն, և մենք էլ ոչինչ չգիտենք եղածի մասին, հույսս չեմ կտրում: Հորաքրոյր Հաննա, քանի դեռ ստույգ չգիտեմ, որ նա մահացել է, չեմ խոսի այդ մասին, — ասաց Մերին առանց տատանվելու:

— Իհարկե, չպետք է հույսդ կորցնես:

— Գրեթե համոզված եմ, որ Ջեյը կենդանի է, — ասաց նա ու նայեց հորաքրոջը, նկատելով, որ վերջինս ամբողջ ժամանակ իրեն է նայում: Մերին մոռացավ ասելիքը, հետո հիշեց ու սպասեց, մինչև միտքը պարզվի ու նոր միայն ասաց.

— Իմ կարծիքով ամենահավանականն այն է, որ Ջեյը մահացած է եղել այն ժամանակ, երբ անձանոթը զանգահարեց: Նա չուզեց ասել, որի համար չեմ մեղադրում նրան և անչափ շնորհակալ եմ, որ չասաց: Այդ մասին ինձ պետք է հայտնե՞ր մի մոտ ազգական, Ջեյի կամ իմ ազգականներից մեկը: Ենթադրում եմ, որ Անդրյուն տեղյակ էր արդեն, երբ այստեղից գնաց, նա չուզեց մեզ վատ դրության մեջ թողնել: Ասաց, որ կզանգահարի, բայց, երբ . . . երբ տեսավ Ջեյին, զգաց, որ իր ուժերից վեր է ու չկարողացավ զանգահարել, գիտենալով, որ դա մեծ հարված կլինե՞ր ինձ համար: Ահա թե ինչու չզանգահարեց: Նա երևի ցանկանում էր այդ ծանր պահին ինձ հետ լինել: Եվ դա ճիշտ է: Նման դեպքում ես էլ այդպես կանեի: Ես ուզում եմ ուղղակի նրա շուրթերից լսել Ջեյի մասին, և ինչ նա արեց. . . ինչ նա անում է, դա . . .

Հորաքույրը նկատեց, որ հիմա ուրո՞ր է Մերին կփղձկա, և դժվար թե գուցի իրեն, եթե փորձի մխիթարել: Նա սրտի կսկիծով մի կերպ գուցե իրեն: Մի րոպե հետո մերին հանգիստ ու իրեն տիրապետելով շարունակեց.

— Երևի հիմա Անդրյուն զբաղված է խեղճ Ջեյի դիակը տեղափոխելու գործով և թաղումը կազմակերպող մարդկանց հետ շուտով այստեղ կգա, որպեսզի պատմի Ջեյի հետ տեղի ունեցած դժբախտության մասին:

Հաննան շարունակում էր նայել նրա գեղեցիկ ու միշտ հետաքրքրասեր, փայլող աչքերին. նա զգում էր, որ ինքն ի վիճակի չէ խոսելու և Մերիի ասածները հաստատում էր գլխի կտրուկ ու արագ շարժումով, կարծես հաշմանդամ լինե՞ր: Քիչ անց նա դադարեց գլխով հավանության նշան անելուց:

— Ահա թե ինչ եմ մտածում, — ասաց Մերին, — և ինչի եմ պատրաստ: Սակայն այդ մասին չեմ ուզում խոսել, քանի դեռ չեմ համոզվել, որ նա մահացել է:

Նրանք շարունակում էին իրար աչքերի մեջ նայել: Հաննայի աչքերը վառվում էին. զգում էր, որ չպետք է թարթի աչքերը, երբ մի քանի րոպե չանցած լսեց երիտասարդ կնոջ սրտից դուրս թռած հառաչանքի ձայնը.

— Օ, տեր իմ աստված, աղաչում եմ քեզ, որ նա չմահանա: — Հաննան իր հերթին շշուկով կրկնեց՝ «Ես էլ», և նորից լռեցին, իմանալով քիչ ու տեսնելով միայն մեկը մյուսի թախծոտ աչքերը: Նրանք այդ վիճակում էին, երբ լսեցին գավիթ մտնող

մարդու ոտնաձայներ: Հաննան ետ նայեց, իսկ Մերին խորը շունչ քաշեց: Նրանք մի կողմ հրեցին իրենց աթոռներն ու շտապ մոտեցան դռանը:

Անդրյուն նեղություն չէր կրել դուռը բախելու, նա բացել էր այն, անձայն ներս մտել և խոհանոցի մոտ տեսնելով նրանց ստվերները, գնացել էր հյուրասենյակ: Կանայք մութ միջանցքում չէին կարողանում տեսնել նրա դեմքը, բայց հաստատուն ու կանոնավոր քայլվածքը հուշում էր, որ անցնողը Անդրյուն է: Մերին ու հորաքույր Հաննան փոխանակ դահլիճ գնալու, կանգնել էին միջանցքում: Քիչ հետո նրանք ճանապարհ տվին, որ Անդրյուն անցնի խոհանոց: Նա ոչ մի վայրկյան կանգ չառավ, շուրթերը սեղմած, լուռ և առանց աչքերը թարթելու ուղիղ գնաց խոհանոց, մոտեցավ հորաքրոջը և այնպես ամուր գրկեց, որ նա տնքաց: «Մերի՛», շշնջաց Հաննան Անդրյունի ականջի մոտ: Անդրյուն նկատեց քրոջը. Մերին կանգնել ու իրեն էր նայում զարմացած երեխայի պես, որն ուրտր է լաց կլինի, և կարծես ցանկանում էր ասել՝ «Օ՛, ինձ մի տանջեք»: Մինչ Անդրյուն որևէ բան կխոսեր, Մերին քնքուշ ու նուրբ ձայնով ասաց.

— Անդրյու, նա մահացել է, չէ՛: — Եղբայրը լուռ գլխով արեց: Հանկարծ Անդրյուն նկատեց, որ երկար ժամանակ է, ինչ ինքը ամուր գրկել էր հորաքրոջը՝ ցավ պատճառելով նրան: Այդ պահին քույրը ցածր ու գերբնական ձայնով հարցրեց.

— Երբ այնտեղ հասար, մահացե՞լ էր:

Անդրյուն նորից գլխի շարժումով պատասխանեց և, թողնելով հորաքրոջը, շրջվեց դեպի քույրը, բռնեց ուսերից ու ավելի բարձրաձայն, քան կցանկանար, ասաց.

— Այո: Մահացել էր անմիջապես:

Նա համբուրեց Մերիին, և նրանք առանց արտասվելու գրկախառնվեցին: Չետո Անդրյուն բուռն հեծկլտաց և, դեմքը հպելով քրոջ այտին, նրա կորացած ուսի վրայով ու արձակված մազերի միջով նայեց հատակին զցված փայլուն լինոլեումին: